

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի N 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը»>>

**Կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2012 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն ս/թ ապրիլի 18-ին իմ ղեկավարությամբ անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը գ. Մարտունի և Այգուտ համայնքներում սողանքների ակտիվացման ժամանակ»>> թեմայով:

2. Ուսումնավարժությանը ընդգրկել Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին, տարահանման հանձնաժողովին, մարզային փրկարարական վարչությանը, գ. Մարտունի և Այգուտ համայնքները:

3. Կազմավորել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝
- |                          |  |
|--------------------------|--|
| փ/ծ գնդապետ Բարսեղյան Մ. | - մարզային փրկարարական վարչության պետ, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ |
| փ/ծ փ/գն-տ Աբրահամյան Հ. | - մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ                                 |
| փ/ծ լեյտենանտ Գորոյան Վ. | - մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի հրահանգիչ                     |
| փ/ծ կապիտան Օհանյան Ռ.   | - Ճամբարակի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար                                |
| Գաբրիելյան Հ.            | - գ. Այգուտ համայնքի ղեկավար   |
| Հովհաննիսյան Վ.          | - գ. Մարտունի համայնքի ղեկավար   |

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Մ. Բարսեղյանին՝ մշակել և մինչև ս/թ փետրվարի 24-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման օրացուցային պլանը: Ուսումնավարժությանն անհրաժեշտ այլ փաստաթղթերը մշակել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանին համապատասխան: Ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել ինձ մինչև ս/թ ապրիլի 11-ը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Գ. Ստեփանյանին:

ՄԱՐԶՊԵՏ

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ